ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան 31 հունվար 2018թ.

ժամը 11:00

Մասնակցում էին
հանձնաժողովի նախագահ՝ Արգամ Գրիգորյան,
անդամներ՝ Արմինե Սահակյան/ԲԱ/, Լիա Վարդազարյան/ԲԱ/, Քրիստինե Քարամյան/ԳԱ/, Արմինե Աբրահամյան/ԳԱ/
քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

**<<ՀՀ-ՍՄԿՀ- ԳՀԱՊՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

Ընդունել ի գիտություն, որ

1. <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է՝

| *Չափաբաժինների համարները* | *Չափաբաժնի անվանումը* | *ԳԻՆԸ/դրամ/* |
|---|---|---|
| 1 | Թուղթ A4 | 1330000 |
| 2 | Թղթապանակ՝ ռեգիստր | 252000 |
| 3 | Արագակար | 40000 |
| 4 | Գրիչ | 35000 |
| 5 | Նշումների թուղթ՝ սոսնձվածքով | 20000 |
| 6 | Սոսինձ | 15000 |
| 7 | Ֆայլ | 190000 |
| 8 | Գրասենյակային գիրք | 18000 |

2.<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված կարգով և սահմանված ժամկետում www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ անձինք.

| | Մասնակցի անվանումը /անունը/ | Էլ. հասցեն |
|---|---|---|
| 1. | <<Սմարթլայն>> ՍՊԸ | ssmartline@mail.ru |
| 2. | Ա/Ձ Էդգար Աբելյան | eabeljan@mail.ru |
| 3. | <<Ադա-Բիզնես>> ՍՊԸ | greta1950@mail.ru |

3. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ընդունվել են և սահմանված կարգով բացվել բացող անդամների կողմից, դրանք համարվել են հետագա գնահատման համար ընդունելի և ներկայացվել գնահատման հաջորդ փուլ:

Բացող անդամներ ------------------------ Լ. Վարդազարյան ------------------------ Ա. Սահակյան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 , դեմ՝ 0

4.Գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվել են բացված հայտերը և անցել գնահատման փուլ:

5.Հաշվի առնելով գնահատման ընթացքում տեղ գտած անհամապատասխանությունը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

-կասեցնել գնման ընթացակարգը և հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պարզաբանում ստանալու նպատակով,

-հայտերի բացման նիստը շարունակել ՀՀ ՖՆ պարզաբանումը ստանալու օրվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին::

Գնահատող անդամներ՝ /ԳԱՊ/ ------------------------ Ա. Գրիգորյան

/ԳԱ/ ------------------------ Ք. Քարամյան

/ԳԱ/ ------------------------ Ա. Աբրահամյան

Քարտուղար՝ ------------------------ Լ. Ավետիսյան

*Հայտերի բացման նիստի շարունակություն*

*13.02.2018թ.*

*ժամը 11:00*

1.Ընդունել ի գիտություն, որ ստացվել է ՀՀ ՖՆ պարզաբանումը հայտերի գնահատումը գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարելու վերաբերյալ:

2.Հանձնաժողովի գնահատող անդամները գնահատել են, որ <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հետևյալ կերպ.

| ՀՀ | Հրավերով սահմանված նվազագույն պահանջները | Մասնակցի անվանումը, գնահատումը | | |
|---|---|---|---|---|
| | | <<Սմարթլայն>> ՍՊԸ | Ա/Ձ Էդգար Աբելյան | <<Ադա-Բիզնես>> ՍՊԸ |
| 1. | Պիտանելիության չափորոշիչ | Չի համապատասխանում* | Համապատասխանում է | Համապատասխանում է |
| 2. | Տեխնիկական չափորոշիչ | Համապատասխանում է | Համապատասխանում է | Համապատասխանում է |
| 3. | Ֆինանսական չափորոշիչ | Համապատասխանում է | Համապատասխանում է | Համապատասխանում է |

*Անհամապատասխանության հիմք՝

<<Սմարթլայն>> ՍՊԸ կողմից Հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագիրը /Հավելված 10/ թվագրված է <<31 հունվար 2018թ.>> ամսաթվով, սակայն էլեկտրոնային թվային ստորագրությունը զետեղված է փաստաթղթի վրա <<2018.01.30>> ամսաթվով, ինչպես նաև հայտը բեռնվել է armeps.am էլեկտրոնային համակարգ/ներկայացվել է Պատվիրատուին/ <<2018/01/30>> ամսաթվով:

3.<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/6>> ծածկագրով ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները ամփոփված են կից Հավելված 1-ում:

4.Հանձնաժողովը որոշեց՝

4.1.Ա/Ձ Էդգար Աբելյանին ճանաչել առաջին տեղ զբաղեցնող մասնակից 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով, <<Ադա-Բիզնես>> ՍՊԸ-ին՝ 2-րդ և 8-րդ չափաբաժինների մասով,

4.2.ծանուցել Ա/Ձ Էդգար Աբելյանին և <<Ադա-Բիզնես>> ՍՊԸ-ին՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել նախատեսված փաստաթղթերը,

4.3.հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ տեղեկատվություն ստանալու վերաբերյալ

4.4.մերժել <<Սմարթլայն>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 526-Ն որոշման Հավելված 1-ի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

5.Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Հանձնաժողովի հաջորդ՝ գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ քան, ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվությունը, Ա/Ձ Էդգար Աբելյանին և <<Ադա-Բիզնես>> ՍՊԸ կողմից ստացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 , դեմ՝ 0

Գնահատող անդամներ՝ /ԳԱՊ/ ---------------- Ա. Գրիգորյան

/ԳԱ/ ---------------- Ք. Քարամյան

/ԳԱ/ ---------------- Ա. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------------- Լ. Ավետիսյան

Հավելված 1

Գնային առաջարկ

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/6>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների

| Չափ | Անվանումը | Ա/Ձ Էդգար Աբեյան | <<Ադա-Բիզնես>> ՍՊԸ | <<Սմարթլայն>> ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ինքնարժեք | ԱԱՀ | Ընդամենը |
| 1 | Թուղթ A4 | 1246000 | 1316000 | 1108333.33 | 221666.67 | 1330000 |
| 2 | Թղթապանակ՝ռեգիստր | 193200 | 140000 | 151666.67 | 30333.33 | 182000 |
| 3 | Արագակար | 27500 | 30000 | 29166.67 | 5833.33 | 35000 |
| 4 | Գրիչ | 22500 | 25000 | 41666.67 | 8333.33 | 50000 |
| 5 | Նշումների թուղթ՝ սոսնձվածքով | 14000 | 18000 | 11666.67 | 2333.33 | 14000 |
| 6 | Սոսինձ | 9000 | 14000 | 20833.33 | 4166.67 | 25000 |
| 7 | Ֆայլ | 171000 | 190000 | 2533.33 | 506.67 | 3040 |
| 8 | Գրասենյակային գիրք | 16200 | 14400 | 21000.00 | 4200.00 | 25200 |